

338 -

Պ-50
Երևանի պետական տնտեսագիտական
ինստիտուտ

Լ. Պ. Պետրոսյան

**Կապիտալիստական հարաբերությունների
զարգացումը Հայաստանում
(դասախոսության տեքստ)**

**«ՏՆՏԵՍԱԳԵՏ»
Երևան-2000**

ԴՏՀ 33(479.25)
ԳՄԴ 65(2Հ)
Պ 505

Հրատարակության է երաշխավորել
ԵՐՊՏԻ «Տնտեսական պարմության
և իրավագիտության» ամբիոնը

Գրախոսներ՝
պ.գ.դ., պրոֆ. Լ.ԱՆԱՆՅԱՆ
պ.գ.բ., դոց. Գ.ԱՅՎԱԶՅԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ Լ.Պ.
Պ 505 Կապիտալիստական հարաբերությունների
զարգացումը Հայաստանում
(դասախոսության տեքստ). - Եր.,
«Տնտեսագետ», 2000. - 16 էջ

ՀՊՏՀ գրադարան



000000648

Դասախոսությունն ընդգրկում է Հայաստանի
իրևեսական զարգացման կարևոր ժամանակաշրջանը՝
19-րդ դարը և 20-րդ դարի սկիզբը, երբ արագազույգ
ֆեոդալական հարաբերությունների քայքայումը
և սկսվեց բուրժուական հարաբերությունների չեղարկումը:

Սակայն ֆեոդալիզմի մնացուկները, որակյալ
աշխարածի և խոշոր դրամական միջոցների
ուսանալու փակվածությունը, ներքին շուկայի
ներդրյունը խոչընդոտում էին այն:

31781 90

ՀՊՏՀ Գրադարան
Библиотека АРЭУ

Պ 0601000000/719
(01)2000

Աշխարհըրը նախատեսված է իրևեսագիտական
բոհների ուսանողների, մասնագետների համար:

ՀՐԱԴՐՄԱՆ
ԱՌՆՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека АРЭУ

ԳՄԴ 65(2Հ)

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2000

1828թ. Պարսկաստանի հետ կնքված Թուրքմենչայի խաղաղության պայմանագրով Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին: Այդ պատմական փաստը մեծ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու նախօրեին երկրի էլիտմիկյան հետամնաց եր: Մոտ քառորդ դար շարունակվող պատերազմները, հայ ժողովրդի անհումա բնաջնջումը և նրա մի մասի բռնի տեղաբնակեցումը Պարսկաստանի և Թուրքիայի տարածքի խորքը, բնակչության զգալի մասի արտագաղթը աշխարհի տարբեր երկրներ՝ ամայացրել էին Հայաստանի քաղաքները և գյուղերը: 19-րդ դարի սկզբին հայ բնակչությունը Արևելյան Հայաստանում հազիվ կազմում էր 100 հազար մարդ: Տնտեսությունը քայքայված էր, հայ ժողովրդի կենսական ուժերը սպառված էին: Հետամնաց ֆեոդալական հարաբերությունները՝ մասնատվածությունը, բնատնտեսության տիրապետությունը, բնակչության ցածր զնդունակությունը արգելակում էին Հայաստանի տնտեսական զարգացումը:

Երկրի տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, որը գտնվում էր զարգացման խիստ ցածր մակարդակի վրա: Երևանի խանությունում, օրինակ, չէր մշակվում գյուղատնտեսության համար պիտանի հողերի 75%-ը: Լճացման վիճակում էր գտնվում գյուղատնտեսական տեխնիկան: Դաշտավարության մեջ աշխատանքի գործիքներից առավել տարածված էր երկաթե խափով փայտե արորը և նախնադարյան փայտե գութանը: Բացակայում էր հողի պարարտացումը, քարուքանդ էր եղել ոռոգման համակարգը:

Անկում էր ապրում նաև առևտուրը և արհեստագործական արտադրությունը, որը զարգացման բարձր աստիճանի էր հասել դեռևս միջնադարում:

Արևելյան Հայաստանում տիրող արտադրական հարաբերությունները արգելակում էին երկրի արտադրողական ուժերի զարգացումը:

Հայ ժողովուրդը ակտիվ պայքարում էր թուրքական և պարսկական լծի դեմ՝ իր ազատագրման հույսերը կապելով Ռուսաստանի հետ: Ցարական կառավարությունն իր հերթին մեծ ուշադրություն էր դարձնում Թուրքիայի և Պարսկաստանի դեմ հայերի ազատագրական պայքարին, որի հաջողությունը կօգներ նրան հաստատվել Անդրկովկասում: Դրանով ցարիզնը նոր հարմար հենակետ կստեղծեր Անդրկովկասում Թուրքիայի, Իրանի և Արևելքում եվրոպական տերությունների դեմ պայքարում: Ավելին, ցարիզնը Անդրկովկասում հետապնդում էր նաև տնտեսական նպատակներ: Այսպես, դեռևս 17-րդ դարում Արևմուտքի և Արևելքի միջև աշխույժ առևտրում հայ առևտրականները խաղում էին ակտիվ դեր: Նրանք առացել էին Ռուսաստանում ազատ առևտրի և Ռուսաստանով Արևմտյան Եվրոպայի երկրներ ապրանքներ տեղափոխելու իրավունք: 1667թ. ուսական կառավարության և Ջուլֆայի հայկական առևտրական ընկերության միջև, որի ձեռքումն էր պարսկական առևտուրը, կնքվել էր առևտրային պայմանագիր: Այն հայ առևտրականներին պարտավորեցնում էր պարսկական մետաքսը Եվրոպա արտահանել Կասպից ծովով և Վոլգա գետով: Դրանով Ռուսաստանը ցանկանում էր Թուրքիայով և Միջերկրական ծովով Եվրոպայի հետ առևտուրը տեղափոխել իր տարածքը և, դառնալով միջնորդ, այդ առևտրում՝ մեծ եկամուտներ ստանալ:

19-րդ դարում Անդրկովկասը Ռուսաստանի համար ձեռք է բերում մեծ նշանակություն նաև որպես վաճառահանման շուկա և հումքի աղբյուր՝

գարգացող ռուսական արդյունաբերության համար: Այդ պատճառով էլ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորելուց հետո ցարական կառավարությունը իրականացնում է մի շարք միջոցառումներ՝ Անդրկովկասը տնտեսապես յուրացնելու համար: Այնտեղ է ուղարկվում ռուսական չինովնիկների մի խումբ՝ տեղական բնական ռեսուրսները և դրանց օգտագործման հնարավորությունները ուսումնասիրելու համար: Այդ հետազոտությունների հետևանքը եղավ «Անդրկովկասում ռուսական տիրույթների զննումը» աշխատությունը: Նրա ներածության մեջ «Ընդհանուր հայացք Անդրկովկասի՝ որպես Ռուսաստանի գաղութի վրա» վերնագրի տակ գրված է. «Ոչ առանց հիմնավորման Անդրկովկասյան նահանգները կարող են անվանվել մեր գաղութները, որոնք պետք է պետությանը զգալի օգուտներ բերեն հարավային կլիմայի արտադրանքներով» և այնուհետև. «Անդրկովկասը, որպես Ռուսաստանի գաղութ դիտելը... պետք է համոզական այն կետը, որից պետք է նայել նրան և ուղղության տալ մեր բոլոր գործողությունները համակարգին»: Այսպիսի դիրքորոշումը իր արտահայտությունը գտավ ռուսական կառավարության այն տնտեսական քաղաքականության մեջ, որն իրականացվում էր Արևելյան Հայաստանում Ռուսաստանին միավորվելուց հետո և առաջին հերթին՝ ագրարային քաղաքականության մեջ:

Ցարիզմը Անդրկովկասում իր դիրքերը ամրապնդելու և սոցիալական հենարան ստեղծելու համար մեծ արտոնություններ էր շնորհում տեղական ֆեոդալներին: 1846թ. փետեմբերի 6-ի օրենքով ցարական կառավարությունը ճանաչեց խաների, բեկերի, աղալսրների և մելիքների ժառանգական սեփականության իրավունքն այն հողերի նկատմամբ, որոնք նրանց էին պատկանում մինչև Ռուսաստանին միավորվելը: Նրանց վերադարձվեցին նախկինում խլված հողերը: 1836թ. օրենսդրորեն ձևակերպվեց նաև հայկական եկեղեցու հողային սեփականության իրավունքը: Մի քանի միլիոն դեսյատին բերրի հողեր յուրացվեցին ցարական կառավարության կողմից: Դրանց մի մասը «մվիրվեց» տեղական չինովնիկներին և ֆեոդալներին:

1841թ. օրենքով ամբողջ գյուղացիությունը բաժանվեց պետականի և մուլքադարականի:

Պետական եկամուտները ավելացնելու համար 1836թ. փոխվեց նախկին հարկային համակարգը: Հաստատուն հարկ սահմանվեց 1836 - 42թթ. համար, որը գյուղացիներից գանձվում էր ինչպես բնեղեն, այնպես էլ դրամական ձևով: Այսպես, Հայկական մարզում 1831թ. գանձվել է 120 հազար ռուբլի, իսկ 1837թ.՝ 225 հազար ռուբլի: Անդրկովկասում 1843թ. բոլոր բնամթերային հարկերը փոխարինվեցին դրամականով, ինչը էլ ավելի վատացրեց գյուղացիության վիճակը և բարձրացրեց ցարական կառավարության ու կալվածատերերի դեմ նրանց բողոքի ալիքը:

Ավելին, արգելվում էր գյուղացիության ազատ տեղափոխումը. կամ սահմանվում էին վերաբնակեցման այնպիսի ծանր պայմաններ, որոնք այն դարձնում էին անհնար:

Այսպիսով, 19-րդ դարի կեսերին ցարիզմը Անդրկովկասում իրականացնում էր ճորտատիրական կարգերի արմատավորման քաղաքականություն: Հողատերերը դառնում էին հողերի լիիրավ և ժառանգական սեփականատերեր, ստանում վարչական իրավունքներ, իսկ գյուղացիները ճորտական կախման մեջ էին դրվում նրանցից:

Արևմտյան Եվրոպայի երկրներում 12-13-րդ դարերում արդեն գյուղացիության բոլոր բնեղեն պարտույթները փոխարինվել էին դրամական քահարայով: Այդ պրոցեսը հայտնի է «պարտույթների կոմուտացիա» անվամբ, որը ամբողջ եվրոպական էկոնոմիկայի զարգացման համար ունեցավ կարևոր սոցիալ-տնտեսական հետևանքներ:

Դրամական քահարան մեծացնում էր գյուղացու կասյը շուկայի հետ և դյանով իսկ մեծացնում ապրանքադրամային հարաբերությունների ծավալը տնտեսության մեջ: Գյուղացիական արտադրանքի վաճառքի պահանջի մեծացումը մեծ դեր խաղաց խոշոր տոնավաճառային առևտրի առաջացման և գնորդ-առևտրականի գյուղ թափանցման համար, որը հավաքում էր այդ արտադրանքը և շահույթով իրացնում տոնավաճառներում: Անշարժ և իներտ ագրարային էկոնոմիկայում սկսում են առաջանալ առևտրային կապիտալիզմի դեռևս շատ թույլ ստիմուլները:

Կոմուտացիայի պայմաններում սկսվեց գյուղացիության անձնական կախման վերացումը մի կողմից ապստամբությունների, մյուս կողմից՝ գյուղացիների անձնական պարտույթների հետ գնման միջոցով: Այսպես, Անգլիայում գյուղացիները ազատվեցին անձնական ֆեոդալական կախվածությունից ավելի շուտ, քան եվրոպական ուրիշ պետություններում: Գյուղացիության մի մասը անձնական ազատություն ձեռք բերեց 1381թ. Ուոք թալերի գլխավորությամբ ապստամբությանը մասնակցելու շնորհիվ: Բայց ընդամենը առմամբ երկրում զերակշռում էր անձնական պարտույթների հետ գնումը թագավորական, եկեղեցական և կալվածատիրական տիրույթներում: Արդեն 14-րդ դարի վերջում անձնական ճորտատիրական կախումը վերացվել էր, և Անգլիայում զրեթե ամբողջ գյուղացիությունը ազատ էր:

Ֆրանսիայում 16-րդ դարի սկզբին գյուղացիական խոշոր ապստամբության, 1358թ. «ժակերիայի» և ֆեոդալների կողմից պարտադրված գյուղացիական անձնական պարտույթների զանգվածային հետ գնման միջոցով գյուղացիության մեծ մասը դարձավ անձնապես ազատ: Բացառություն էր կազմում Գերմանիան, որտեղ, ընդհակառակը, 1525թ. գյուղացիական պատերազմի պարտության հետևանքով ճորտատիրությունը ոչ միայն չվերացվեց, այլ ավելի տարածվեց և արմատավորվեց: Գերմանիայում ֆեոդալ-ճորտատիրական կարգի վերացման սկիզբը դրվեց միայն 19-րդ դարի սկզբի ռեֆորմներով:

Ռուսաստանում այն պահպանվեց ավելի երկար և վերացվեց 1861թ. ագրարային ռեֆորմով:

Չնայած ֆեոդալական հարաբերությունների պահպանմանը՝ Հայաստանի ազատագրումը պարսկական լծից և խաղաղության ապահովումը պայմաններ ստեղծեցին գյուղատնտեսության զարգացման համար: 1830 - 60թթ. ցանքատարածություններն ավելացան զրեթե 2.5 անգամ, ամասունների գլխաքանակը՝ զրեթե 2 անգամ: Բարձրացավ գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը: Ցորենի և գարու համախառն արտադրությունն աճեց 5 անգամ, բրնձինը՝ 2.5 անգամ, քամքակինը և վուշինը՝

գրեթե 4 անգամ: Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ավելացավ 2.7 անգամ:

1860-ական թվականներին Երևանյան նահանգում առավել արագ զարգանում էր բամբակագործությունը: 1861թ. արտադրվում էր 30 հազար, իսկ 1864թ.՝ գրեթե 300 հազար փուք բամբակ: Արտադրված բամբակի մի մասն արտահանվում էր Ռուսաստան, մյուս մասն օգտագործվում էր տեղում: 19-րդ դարի 40-ական թվականների վերջից զգալիորեն արագացան մաս արհեստագործական արտադրության զարգացման տեմպերը: 1829 - 1863թթ. Երևանյան նահանգում քաղաքային արհեստագործների ընդհանուր թիվն ավելացավ 2.7 անգամ: Դրա հետ մեկտեղ տեղի էր ունենում ջուլհակների և բուրդ զգողների թվաքանակի կրճատում՝ ռուսական և օտարերկրյա տեքստիլ արտադրանքի ներմուծման հետևանքով: 1832 - 1865թթ. Անդրկովկաս ներմուծվող բամբակագործական արտադրանք ավելացավ ավելի քան 9 անգամ, իսկ բրդյա արտադրանքինը՝ գրեթե 7 անգամ:

Հայաստանում արհեստագործական արտադրության խոշոր կենտրոններ էին համդիսանում Երևանը և Ալեքսանդրապոլը: Այդ քաղաքների արհեստագործական և առևտրական համքարություններում ընդգրկված էր մոտ 5100 մարդ:

Համքարությունները Հայաստանում, ինչպես և Եվրոպայում, հանդիսանում էին քաղաքային արտադրության կազմակերպման յուրահատուկ ձևեր: Նրանց առաջացումը պայմանավորված էր զբաղմունքների պրոֆեսիոնալ մասնագիտացմամբ և դրանակամ հարաբերությունների զարգացմամբ: Համքարություններին բնորոշ էր արտադրության խիստ կանոնակարգումը՝ օգտագործվող գործիքների սահմանումը, գործողությունների հաջորդականությունը, ընդունված նմուշին համապատասխանեցումը:

Այդ պայմանների պահպանումը ապահովում էր աշակերտների, ենթավարպետների և հետո միայն վարպետների պատրաստումը, ինչպես նաև տեխնիկական նորությունների օգտագործման խստագույն արգելումը: Արտադրության և իրացման կանոնակարգումը ամհրաժեշտ էր բնատնտեսության տարածման հետևանքով սահմանափակ ներքին շուկայի պահանջներին արտադրությունը հարմարեցնելու և մեծացնելու համար: Միևնույն ժամանակ համքարային համակարգը իր խիստ կանոնակարգմամբ խոչընդոտում էր տեխնիկական առաջընթացը և պահպանում արտադրությունը ձեռք բերված մակարդակի վրա:

Հայաստանի քաղաքներում կային նաև արդյունաբերական ձեռնարկություններ (կաշեգործական, օճառագործական, զինեգործական, ձիթագործական և այլն), որոնք իրենցից ներկայացնում էին ոչ մեծ մանուֆակտուրային արհեստանոցներ:

Հայաստանում համեմատաբար զարգացած էր լեռնային արդյունաբերությունը, որը ներկայացված էր պղնձածուլական արտադրությամբ պետական ու մասնավոր ձեռնարկություններում և քարաղի հանույթով: Դրանք մանուֆակտուրային ձեռնարկություններ էին, որոնք մեծ եկամուտներ էին բերում զանձարանին, և ցարիզը հետաքրքրվում էր դրանցով Անդրկովկասի նվաճման պահից: Այսպես, Կողքի և Նսխիջևանի աղի հանքերը զանձարանին տարեկան տալիս էին 1763.2 հազար ռուբլի եկամուտ:

Այդ գործարաններում աշխատում էին «գրանցված» և պետական

գյուղացիները, որոնք չէին ազատվում իրենց գյուղացիական պարտավորություններից: Նրանց աշխատանքի արտադրողականությունը շատ ցածր էր, այդ պատճառով էլ 19-րդ դարի կեսերից Ալալերդու և Շամլուղի պետական գործարաններում վերացվում է «գրանցված» գյուղացիների պարտադիր աշխատանքը: Այդ ձեռնարկությունները վարձակալությամբ վերցրած կապիտալիստները պարտավոր էին օգտագործել վարձու, ազատ աշխատուժը:

Ճորտական աշխատանքի օգտագործումը արդյունաբերության մեջ Հայաստանն ընդօրինակել էր Ռուսաստանից:

Ռուսական մանուֆակտուրայի զարգացման պատմական առանձնահատկություններից մեկը ճորտի աշխատանքի լայն օգտագործումն էր արդյունաբերության մեջ: Ճորտատիրական Ռուսաստանում չէր կարող առաջանալ վարձու աշխատուժի շուկա: Խրախուսելով արդյունաբերության զարգացումը և պահպանելով ֆեոդալական կարգերը՝ կառավարությունը դեռևս 18-րդ դարի սկզբին պետական և մասնավոր գործարաններին «գրանցում» էր գյուղացիներ ամբողջ գյուղերով, որոնք իրենց կոռային աշխատանքը պետք է կատարեին գործարաններում:

Հայաստանում 1864թ. կար 424 ձեռնարկություն 2672 աշխատողներով, որոնց տարեկան արտադրանքը կազմում էր 404 հազար ռուբլի: 1857թ. պղնձածուլական գործարանները արտադրում էին 6460, իսկ 1867թ.՝ 16952 փոփ պղինձ, այսինքն 10 տարվա ընթացքում պղնձի արտադրությունը զրեթե եռապատկվեց: 1850 - 1860թթ. աղի արտադրությունը ավելացավ մոտ 70%-ով և կազմեց 1241.2 հազար փոփ:

Հայաստանի տնտեսական զարգացմանը նպաստում էր խճուղիների կառուցումը, որը որոշ չափով վերացնում էր նրա տրանսպորտային կտրվածությունը Ռուսաստանից:

Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացման համար մեծ նշանակություն ուներ Երևանյան մահանգի ստեղծումը և հայ բնակչության թվաքանակի աճը՝ Պարսկաստանից, Թուրքիայից, Ռուսաստանից և այլ երկրներից արտագաղթողների հաշվին: 1828 - 1831թթ. Թուրքիայից և Պարսկաստանից Անդրկովկաս տեղափոխվեց 105 հազար հայ, որոնցից 57.2 հազարը բնակվեց Հայկական մարզում: 1831թ. այստեղ բնակչությունը կազմում էր 161747 մարդ: 1873թ. Երևանյան մահանգում բնակվում էր 496140, 1897թ.՝ 797855, իսկ 1913թ.՝ 1000100 մարդ, այսինքն 1831 - 1913թթ. բնակչությունն ավելացել էր զրեթե 6.2 անգամ:

1850 - 1860-ական թվականներին արագ զարգանում էր նաև ներքին առևտուրը: Երևանյան մահանգում ապրանքաշրջանառության ընդհանուր գումարը 1864թ. կազմում էր մոտ 10 մլն ռուբլի, ինչը 2.5 անգամ զերազանցում էր 19-րդ դ. 20-ական թվականների ներքին ապրանքաշրջանառության ծավալը:

Անդրկովկասի արտաքին առևտրի զարգացման համար մեծ նշանակություն ուներ ցարիզմի առևտրա-տնտեսական քաղաքականությունը: 1821թ. վերացվեց 1817թ. մաքսային տարիֆը, որով ցարիզմը խրախուսում էր Ռուսաստանի առևտրական կապերի զարգացումը Թուրքիայի և Իրանի հետ: Անդրկովկաս ներմուծվող արևմտաեվրոպական պետությունների ապրանքների վրա սահմանվում էր ցածր՝ 5% մաքսատուրք, իսկ առևտրականներին տրվում էին մեծ արտոնություններ: Արտոնյալ տրանզիտային տարիֆի սահմանումը

նպաստում էր անդրկովկասյան առևտրի աշխուժացմանը: 1821 - 1831թթ. Անդրկովկասի արտաքին առևտրական շրջանառությունը 1389.1 հազար ռուբլուց ավելացավ մինչև 2462.7 հազար ռուբլու կամ գրեթե կրկնապատկեց:

Անդրկովկասի առևտրի մեծ մասը գտնվում էր հայ առևտրականների ձեռքում, որոնք 19-րդ դ. 20-ական թվականներին առևտրական կապեր ունեին Եվրոպայի գրեթե բոլոր խոշոր քաղաքների հետ: Նրանք հատկապես մեծ առևտրական գործարքներ էին կատարում Լայպցիգի տոնավաճառում, որտեղից բերում էին քամբալյա գործվածքեղեն, մահուդ, մետաքս, գալանտերեա և այլն:

Անդրկովկասի տրանզիտային առևտուրը բերում էր մեծ եկամտներ և նպաստում կապիտալների կուտակմանը առևտրականների ձեռքում: Սակայն այդ տարիքի գործողությունը մեծ վնաս էր պատճառում ռուսական մանուֆակտուրային և առևտրին, որովհետև հետզհետե կրճատվում էին Անդրկովկասի առևտրական կապերը Ռուսաստանի հետ և ավելանում էր արդյունաբերական հումքի որոշ տեսակների և ոսկու արտահանումը: 1831թ. ռուսական արդյունաբերողների և առևտրականների ճնշմամբ արտոնյալ տրանզիտային տարիքը փոխարինվեց էովանավորչականով: Նոր օրենքով եվրոպական ևսպրանքների ներմուծումը Անդրկովկաս թույլատրվում էր միայն Սևծովյան մավահանգիստներով՝ մաքսատուրքերը գանձելով եվրոպական տարիքով: Արգելվում էր այն ասպրանքների ներմուծումը, որոնք կարող էին մրցակցել ռուսական մանուֆակտուրային արտադրանքների հետ: Թույլատրվում էր ռուսական և անդրկովկասյան արտադրության ասպրանքների արտահանումը Անդրկովկասից ստանց մաքսատուրքերի: Չնայած այդ արգելքին՝ Անդրկովկասի առևտրական շրջանառության մեջ շարունակվում էին մեծ դեր խաղալ օտարերկրյա ասպրանքները: 1846թ. ցարական կառավարությունը թույլ է տալիս Անդրկովկասով օտարերկրյա ասպրանքների սրանգիտել Իրան և Թուրքիա:

Այսպիսով, 19 թդ դարի առաջին կեսում ռուսական առևտրա-արդյունաբերական կապիտալի փորձերը՝ նվաճել անդրկովկասյան շուկան ցարական կառավարության օգնությամբ, հաջողություն չունեցան: Դրա հիմնական պատճառը ռուսական արդյունաբերական և առևտրական կապիտալի թույլ զարգացումն էր, Անդրկովկասում ասպրանքա-դրամային հարաբերությունների զարգացման ցածր մակարդակը, այն Ռուսաստանի հետ կապող երկաթուղային ուղիների բացակայությունը և այլն: 19-րդ դարի առաջին կեսում, այդպիսով, Ռուսաստանը չկարողացավ իրականացնել Անդրկովկասը տնտեսապես նվաճելու ծրագիրը: Ուստի Անդրկովկասի տնտեսական նվաճումը կատարվեց զգալիորեն ավելի ուշ, քան քաղաքականը:

* * *

Դրությունը արմատապես փոխվեց 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին: Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում իրական պայմաններ ստեղծեց Անդրկովկասը տնտեսական կախման մեջ դնելու ցարական կառավարության ծրագրերի իրականացման համար: «Խորությամբ» և «լայնությամբ» զարգացող ռուսական կապիտալիզմը Անդրկովկասը ներգրավում էր համաշխարհային առևտրային շրջանառության մեջ՝ դարձնելով այն հումքի աղբյուր և վաճառահանման շուկա իր ասպրանքների համար:

Սակայն Հայաստանում գոյություն ունեցող ֆեոդալական հարաբերությունները խոչընդոտում էին կապիտալիզմի զարգացումը: Հայաստանի սոցիալ տնտեսական զարգացումը արագացնելու համար անհրաժեշտ էր վերացնել ֆեոդալա-ճորտատիրական հարաբերությունները:

Ռուսաստանում 1861թ. գյուղացիական ռեֆորմը վերացրեց ճորտատիրական իրավունքը՝ գյուղացիները ստացան անձնական ազատություն: Պահպանվեց կալվածատիրական հողատիրությունը: Գյուղացիներին տրվում էին ոչ միայն տնամերձ հողերը, այլև դաշտային բաժնեհողերը, որոնք ամրացվում էին գյուղացիական համայնքներին: Գյուղացիները չէին կարող հրաժարվել բաժնեհողից, բայց հողի «հետ գնումը» կարող էր տեղի ունենալ միայն «կողմնորոշի համաձայնությամբ»: Սահմանվում էին բաժնեհողերի առավելագույն և նվազագույն չափերը: Հետ գնման գումարը որոշվում էր ոչ թե հողի շուկայական գնով, այլ բաերայի կապիտալացման միջոցով, որի հետևանքով հետ գնման վճարումները գերազանցում էին հողի շուկայական գները: Հետ գնման գումարի 20%-ը վճարում էին գյուղացիները, մնացած 80%-ը կալվածատերերը ստանում էին կառավարությունից, պետական արժեթղթերով, որոնք տարեկան բերում էին 5% եկամուտ: Այդ գումարը գյուղացիները պետք է վերադարձնեին կառավարությանը 49 տարվա ընթացքում՝ ամսականորեն հետ միասին:

1861թ. ռեֆորմը խոչընդոտում էր իրադարձություն էր 19-րդ դ. Ռուսաստանի պատմության մեջ: Այն վերջ դրեց երկրի տնտեսական զարգացման ֆեոդալա-ճորտատիրական դարաշրջանին և նշանավորեց բուրժուական տնտեսավարման դարաշրջանի սկիզբը: Գոյություն ունեցող ազրարային կապիտալիզմի ազգային ձևերին՝ անգլիական, ֆրանսիական, ամերիկյան, պրուսական և ուրիշներ, ավելացավ նաև ռուսականը: Նրանցից յուրաքանչյուրը հատուկ ազգային-պատմական պայմանների ծնունդ էր և տարբեր չափով էր նպաստում շուկայական տնտեսության զարգացմանը: Բայց նրանց բոլորին (բացի ռուսականից) բնորոշ էր հիմնական արտադրողի՝ ֆերմեր-գյուղացու հողի մասնավոր սեփականությունը: 1861թ. ռեֆորմը տարբերվում էր նրանցից, որովհետև պահպանում էր հին՝ ֆեոդալա-ճորտատիրական կարգի մնացուկները և դրանցից կարևորները՝ կալվածատիրական հողատիրությունը, գյուղական համայնքը և գյուղացիների շահագործման հին ձևերը:

Այդ պայմանները բնորոշ էին նաև Հայաստանին, որտեղ 1861թ. գյուղացիական ռեֆորմից հետո ցարական կառավարությունը գյուղացիական շարժման, դասակարգային և ազգային-ազատագրական պայքարի ակտիվացման նեոտեանքով ստիպված էր իրականացնել նույնպիսի վերափոխումներ:

1870թ. մայիսի 14-ին հաստատվեց գյուղացիական ռեֆորմի նախագիծը, որն արտահայտում էր ցարիզմի և տեղական կալվածատերերի շահերը: Այդ ռեֆորմը տարածվում էր միայն կալվածատիրական գյուղացիների վրա, որոնք կազմում էին գյուղացիության ընդամենը 30%-ը, ուստի Հայաստանի տնտեսական զարգացման վրա մեծ ազդեցություն ունենալ չէր կարող: Բացի դրանից, այստեղ չկար ճորտատիրական իրավունք, և գյուղացիները ամրացված չէին հողին, ինչպես Ռուսաստանում, և իրավական տեսակետից այն նույնպես ոչինչ չտվեց գյուղացիությանը:

Հայաստանում գյուղացիական ռեֆորմի հիմնական խնդիրը պետք է լիներ

կալվածատիրական հողատիրության և գյուղացիության ֆեոդալական պարտույթների վերացումը, որը նույնպես չլուծվեց: Ավելին, այս օրենքը առաջին անգամ սահմանում էր մուլքադարձների հողի սեփականության իրավունքը: Իսկ գյուղացիներին տրվում էր միայն այդ հողերից մշտապես օգտվելու իրավունք, որի համար նրանք առաջվա պես պետք է կատարեին տարբեր պարտույթներ, որոնք մնում էին անփոփոխ: Գյուղացիները կարող էին հետ գնել իրենց բաժնեհողերը և դառնալ դրանց սեփականատերերը: Սակայն, ի տարբերություն Ռուսաստանի, հետ գնումը պետք է կատարվեր առանց կառավարական վարկերի, ոստի ավելի ծանր պայմաններով: Բաժնեհողերի հետ գնումը տեղի չէր ունենում մալսայն պատճառով, որ օգոգվում էր քնեղեն պարտույթների գնահատումը դրամով, առանց որի հնարավոր չէր սահմանել հետ գնման գումարը: Դրանք սահմանվեցին 1873 - 1876թթ. միայն, ինչպես և Ռուսաստանում բահրայի կապիտալացման միջոցով և զգալիորեն զերազանցում էին հողի փաստացի գինը: Դրա հետևանքով հետոեֆորմյան 30 տարիների ընթացքում Երևանյան մահանգում հետ գնվեց միայն 41 դեսյատին հող: Այդպիսով, գյուղացիական ռեֆորմի մյուս կարևոր խնդիրը՝ բաժնեհողերի հետ գնումը նույնպես չլուծվեց:

Օրենքը սահմանում էր գյուղացու բաժնեհողի չափը 15 տարեկանից բարձր արական սեռի ամեն մի շնչին 5 դեսյատին, քայց ոչ պակաս, քան 7.5 և ոչ ավելի, քան 15 դեսյատին ամեն մի ծխին: Այդ չափից ավելի հողերը կալվածատերերը կարող էին հետ վերցնել (отрешка-ներ), եթե բաժնեհողերի բաշխումից հետո նրանց մնում էր մշակվող հողերի մեկ երրորդից պակաս: Այս օրենքը կալվածատերերը օգտագործում էին գյուղացիների լավագույն բաժնեհողերը կրճատելու և դրա հաշվին սակավահող և հողազուրկ գյուղացիներին ավելի ծանր վարձակալմամբ համձնելու համար:

Ռուսաստանի 1861թ. ագրարային օրենքով բաժնեհողերի հետ գնումը գյուղացիների կողմից պարտադիր էր, իսկ Հայաստանում գյուղացին կարող էր հրաժարվել իր բաժնեհողից: Այդ հողերը կարող էին տրվել տնտեսական տեսակետից «հուսալի» գյուղացիներին, որը նպաստում էր հողերի կենտրոնացմանը ունևոր գյուղացիների ձեռքում: Դրան նպաստում էր մալս Հայաստանում հողօգտագործման համակարգի փոփոխումը: Համայնական հողատիրությունը փոխարինվում էր հողի մասնավոր գյուղացիական սեփականությամբ: Ձրկվելով համայնքների պաշտպանությունից՝ գյուղացիության մեծ մասը քայքայվում էր՝ արագացնելով նրանց շերտավորումը:

Օրենքը թույլ էր տալիս գյուղացիներին իրենց բաժնեհողերը գիջել համայնքի մյուս անդամներին, որը պայմաններ էր ստեղծում հողի գնման, վաճառքի, գրավադրման և այլ գործարքների, հետևաբար մալս՝ սեփականության բուրժուական հարաբերությունների զարգացման համար:

Հայաստանում գյուղացիության մոտ 70%-ը կազմում էին պետական գյուղացիները: 1900թ. մայիսի 1-ի օրենքով այդ գյուղացիների օգտագործման մեջ եղած հողերը հայտարարվեցին պետական սեփականություն, պահպանվեց համայնական հողատիրությունը: Հողերի օգտագործման համար գյուղացիները գանձարանին տարեկան պետք է վճարեին դրամական բահրա:

Այսպիսով Հայաստանում գյուղացիական ռեֆորմը չլուծեց ագրարային հարցը: Պահպանվեց հողերի անհամաչափ բաշխումը գյուղացիների միջև: Գյուղացիական տնտեսությունները, կազմելով տնտեսությունների 98,8%-ը,

ունեին հողագործության համար պիտանի հողերի ընդամենը 32%-ը: Մնացածը պատկանում էր մի քանի հարյուր կալվածատերերի, եկեղեցիներին և ցարական գանձարանին: Մի գյուղացիական տնտեսությանը բաժին՝ էր ընկնում մոտ 8 դեսյատին հող, իսկ կալվածատիրականին՝ ավելի քան 300 դեսյատին:

Անփոփոխ մնացին նաև հողատիրության նախկին ձևերը: Ի տարբերություն Ռուսաստանի, որտեղ պետական վարկի օգնությամբ տեղի էր ունենում բաժնեհողերի պարտադիր հետ զնույնը և գյուղացիների վերածումը սեփականատերերի՝ պայմաններ ստեղծելով հողերի կենտրոնացման համար ունևոր տնտեսությունների ձեռքում և նրանց ներգրավման համար ապրանքադրամային հարաբերությունների մեջ, Հայաստանում գյուղացիները, չկարողանալով հետ զնել բաժնեհողերը, ստիպված էին վճարել բնեղեն ու դրամական ռենտա և կատարել տարբեր պարտույթներ:

Չնայած գյուղացիական ռեֆորմի այսպիսի սահմանափակ բնույթին՝ Հայաստանում այն, ինչպես և Ռուսաստանում, նպաստում էր կապիտալիզմի զարգացմանը գյուղատնտեսության մեջ: Սակայն Հայաստանում մանր հողատիրության պայմաններում այն տեղի էր ունենում կուլակային տնտեսությունների զարգացման միջոցով, մինչդեռ Ռուսաստանում կալվածատիրական տնտեսությունները դանդաղորեն վերափոխվում էին կապիտալիստական տնտեսությունների:

Հայաստանում 19-րդ դարի 80-ական թվականներին գյուղական բնակչության 33%-ը կազմում էին չքավորները, 13%-ը՝ կուլակները և 54%-ը՝ միջակները: Տասը տարի անց՝ 1890թ. արդեն չքավորները կազմում էին 47%, կուլակները՝ 13%, միջակները՝ 40%: Այդպիսով, գյուղացիության քայքայումը և չքավորների թվաքանակի ավելացումը տեղի էր ունենում միջակ գյուղացիների հաշվին:

Գյուղացիության քայքայման հետևանքով գյուղում զարգանում էին կապիտալիստական հարաբերությունները: Արտադրության միջոցները կենտրոնանում էին ունևոր տնտեսությունների ձեռքում, որոնք գնալով ավելի մեծ չափով էին անցնում վարձու աշխատանքի օգտագործմանը, մեծանում էր արտագնացությունը: Քայքայված գյուղացիները աշխատանք էին փնտրում Բաքվում, Թիֆլիսում, Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում և այլուր:

Մանր սեփականատերերի քայքայմանը նպաստում էր նաև վաչխառուական կապիտալի զարգացումը:

Գյուղում տեղի ունեցող սոցիալական փոփոխությունները ազդում էին գյուղատնտեսության վրա: Ներքին շուկայի ընդլայնումը խորացնում էր աշխատանքի հասարակական բաժանումը, գյուղատնտեսության մասնագիտացումը և առևտրային հողագործության զարգացումը, որն իր հերթին արագացնում էր բնատնտեսության քայքայումը, ապրանքադրամային հարաբերությունների զարգացումը, գյուղացիների շերտավորումը և գյուղում կապիտալիզմի զարգացումը:

Հետռեֆորմյան ժամանակաշրջանում Հայաստանում առանձնապես արագ տեմպերով զարգանում էին բանբակագործությունը և խաղողագործությունը: Դա պայմանավորված էր ռուսական արդյունաբերության պահանջների մեծացմանը, ինչպես նաև ԱՄՆ-ում քաղաքացիական պատերազմի տարիներին Եվրոպա ամերիկյան բանբակի արտահանման կրճատման հետևանքով դրսև

համաշխարհային զենրի բարձրացմամբ: 1880-1890թթ. բամբակի արտադրությունը Հայաստանում ավելացավ 9 անգամ: 1890թ. արտադրվում էր 500 հազար փոք զտած բամբակ, որը 19 անգամ ավելի էր, քան 1860թ.:

19-րդ դ. 90-ական թվականներից արագ զարգանում էր նաև խաղողագործությունը: 1900թ. խաղողի այգիների տարածքը 1870թ. համեմատությամբ ավելացավ գրեթե 1,5 անգամ, իսկ խաղողի բերքը՝ 82%-ով: Ավելացավ նաև բրնձի, ծխախոտի և այլ տեխնիկական կուլտուրաների արտադրությունը:

* * *

Հետոեֆորմյան ժամանակաշրջանում զգալիորեն արագացավ նաև Ռուսաստանի և նրա ծայրամասերի արդյունաբերության զարգացումը: 19-րդ դարի 70-ական թվականներին Հայաստանի արդյունաբերությունը թևակոխեց զարգացման մասնաֆակտուրային փուլը: Արևմտյան Եվրոպայում այն ընդգրկել է 16-18-րդ դդ.:

Մասնաֆակտուրան ձեռքի աշխատանքի և աշխատանքի քաժամանակ վրա հիմնված կապիտալիստական ձեռնարկություն է, որը պատմականորեն նախորդել է մեքենայական արտադրությանը: Տեխնիկական հագեցվածությամբ այն նման էր արհեստագործությանը՝ ձեռքի աշխատանքի տիրապետությամբ, իսկ աշխատանքի քաժամանակը և վարձու քանվորների օգտագործմամբ՝ կապիտալիստական ֆաբրիկային:

Եվրոպական երկրներում 18-րդ դ. երկրորդ կեսում արդեն մասնաֆակտուրային արտադրությունը սպառել էր իր հետագա աճի հնարավորությունները: Ձեռքի աշխատանքի պայմաններում արտադրության ծավալների մեծացումը հնարավոր էր միայն աշխատօրվա սուղողության մեծացման հաշվին, որն ուներ իր քնական սահմանները:

Ռուսաստանում մասնաֆակտուրային արտադրությունը պահպանվեց մինչև 19-րդ դարի կեսերը, իսկ Հայաստանում՝ 19-րդ դարի վերջը:

Արդյունաբերական հեղաշրջումը Հայաստանում սկսվեց 19-րդ դ. վերջին՝ մոտ մեկ ու կես դար ավելի ուշ Անգլիայի ու եվրոպական մյուս երկրների և մոտ մեկ դար՝ Ռուսաստանի համեմատությամբ:

Արդյունաբերական հեղաշրջումը 19-րդ դ. էկոնոմիկայի պատմության հիմնական իրադարձությունն է: Այն արմատապես փոխեց արդյունաբերության զարգացման հնարավորությունները:

Արդյունաբերական հեղաշրջման հիմնական բովանդակությունը տեխնիկական հեղափոխությունն է, որը վերափոխեց արտադրության տեխնիկական բազան, ձեռքի աշխատանքը փոխարինեց մեքենայականով: Մասնաֆակտուրային փոխարինեց ֆաբրիկան, որը հիմնված էր մեքենաների համակարգի և շոգեշարժիչի օգտագործման վրա:

Արդյունաբերական հեղաշրջման կարևոր նախապայմաններն էին՝ արտադրության տեխնիկական վերազինման համար անհրաժեշտ դրամական միջոցների կուտակումը և վարձու աշխատուժի բանակի առաջացումը:

Հայաստանում նույնպես տեղի էր ունենում կապիտալի կուտակում, մանր արտադրողների քայքայում և այլն: Կապիտալի կուտակման աղբյուր էր հանդիսանում Անդրկովկասի միջանցիկ առևտուրը, որը գտնվում էր հայ առևտրականների ձեռքում: Կարևոր դեր խաղացին նաև ցարական

կառավարության կապալները, որոնք կապված էին ռուսական գորքի և ռազմավարչական ապարատի պահպանման հետ ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների ժամանակ: Հայերի ձեռքում էր գտնվում նաև Անդրկովկասի բնական ռեսուրսների օգտագործման կապալների մեծ մասը:

Կապիտալի կուտակման աղբյուր հանդիսացավ նաև առևտրային և վաշխառուական կապիտալը: Այն խորը արմատներ ուներ Հայաստանում՝ կապիտալների պակասի և բանկային ու վարկային գործի թույլ զարգացման հետևանքով:

Հայ ձեռնարկատերերը մեծ առևտրական և արդյունաբերական գործունեություն ծավալեցին նաև երկրի սահմաններից դուրս՝ Թիֆլիսում, Բաքվում և Բաթումիում: 19-րդ դ. վերջում նրանց էր պատկանում Թիֆլիսի առևտրա-արդյունաբերական ձեռնարկությունների ավելի քան 60%-ը: Թիֆլիսի 71 արդյունաբերական ձեռնարկություններից 36-ը պատկանում էին հայերին, ինչպես նաև 6 բաժնետիրական բանկերից՝ 4-ը: Հայ ձեռնարկատերերը իշխող դիրքեր էին գրավում նաև Բաքվի նավթարդյունաբերության մեջ: Նրանց էր պատկանում 1879թ. 155 նավթահորեր, ռուսներին ու եվրոպացիներին՝ 79, մնացածներին՝ 61-ը:

Այսպիսով, 19-րդ դ. երկրորդ կեսին արդեն հայ առևտրային բուրժուազիայի որոշ ներկայացուցիչներ կուտակել էին մեծ կապիտալներ, որոնք ներդրեցին Անդրկովկասի արդյունաբերության մեջ:

Անդրկովկասի արդյունաբերության զարգացմանը նպաստեց նաև 19-րդ դարի 70-ական թվականներից օտարերկրյա՝ ռուսական, ֆրանսիական, անգլիական և այլ կապիտալների ներհոսքը, որոնց գրավում էին տեղական հարուստ բնական ռեսուրսները: Սակայն ցարիզմի գաղութային քաղաքականությունը խոչընդոտում էր Հայաստանի տնտեսական զարգացմանը: Նրա արդյունաբերության զարգացումը միակողմանի էր: Հայաստանում աչքի էին ընկնում արդյունաբերության միայն երկու ճյուղ՝ պղնձի և գինու-կոնյակի, որոնք 1913թ. տալիս էին խոշոր արդյունաբերության համախառն արտադրանքի 84%-ը:

Պղնձի արդյունաբերության արագ զարգացումը Հայաստանում սկսվեց 19-րդ դարի 90-ական թվականներից: Դա պայմանավորված էր 1890 - 1900թթ. Ռուսաստանում արդյունաբերական վերելքի տարիներին մետալուրգիական և մետաղամշակման արդյունաբերության արագ զարգացմամբ: Տասը տարվա ընթացքում Հայաստանում պղնձի արտադրությունն ավելացավ 5 անգամ, այն ժամանակ, երբ Ուրալում՝ պղնձի արտադրության հիմնական կենտրոնում աճը կազմեց միայն 40%:

19-րդ դ. վերջում Հայաստանի պղնձահանքային արդյունաբերություն է քափանցում ֆրանսիական կապիտալը, որը գրավում է Ալավերդու և Ալիսթալայի պղնձի հանքերը: 1899թ. Ալավերդու հանքերն ու գործարաններն անցան «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերություն» ֆրանսիական մոնոպոլիստական միավորմանը, որը տեխնիկապես վերազինեց և կատարելագործեց Ալավերդու պղնձի արտադրությունը: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին այդ մոնոպոլիստական ընկերության ձեռքում էին նաև Շամլուղի, Մանեսի և Շահալի-էյլարի, Սյունիքի և Դավանի պղնձի հանքերն ու պղնձածուլական գործարանները:

Պղնձի արդյունաբերության մեջ իրենց կապիտալները ներդրեցին մակ հայերը: 1897թ. խոշոր ձեռներեց Մելիք-Ազարյանցը Չանգեզուտում կառուցեց հզոր պղնձածուլակաճ գործարան: Նույնպիսի գործարաններ կառուցեցին մակ Մելիք-Փարսադանյանը, Կոնդուրով եղբայրները և ուրիշներ:

Հայաստանի արդյունաբերությունը նոր հզոր վերելք ապրեց 1909 - 1913թթ., երբ պղնձի ձուլումն ավելացավ 4.8, իսկ Ռուսաստանում՝ 4.1 անգամ: 1900թ. Հայաստանը տալիս էր Ռուսաստանի պղնձի արդյունաբերական արտադրության 14%, իսկ 1913 թվականին՝ 16,8%: Սակայն Հայաստանի պղնձի արդյունաբերության մեծ մասը վերահսկվում էր ֆրանսիական կապիտալի կողմից, որը ստացված շահույթի հիմնական մասը տեղափոխում էր արտասահման՝ զրկելով արդյունաբերության այդ ճյուղը տեխնիկական վերակառուցման և հետագա զարգացման հնարավորությունից: Տեղական կապիտալը չէր կարող մրցակցել օտարերկրյա կապիտալի հետ և հետզհետե նրան էր զիջում իր դիրքերը: 1908թ. տեղական կապիտալի տեսակարար կշիռը Հայաստանի արդյունաբերության մեջ կազմում էր 38,5%, 1913թ.՝ 15%: Պղնձի տարեկան արտադրության ավելի քան 90%-ը պատկանում էր օտարերկրացիներին:

Հայաստանում 19-րդ դարի վերջում արագ զարգանում էր գինու-կոնյակի արդյունաբերությունը: Երևանում տեղական կապիտալիստներ Թաիրովը, Աֆրիկովը, Սարաջևը և ուրիշներ կառուցեցին գինու-կոնյակի գործարաններ: Գինու-կոնյակի արդյունաբերության ծաղկումը սկսվեց 20-րդ դարի սկզբին: 1900թ. ռուս կապիտալիստ Շուստովը գնեց Թաիրովի գործարանը, ընդլայնեց և տեխնիկայես վերակառուցեց այն: Գինու և կոնյակի գործարաններ կառուցվեցին Ղամարլուում և Աշտարակում: 1900 - 1913թթ. Հայաստանում գինու արտադրությունն ավելացավ 2.8, սպիրտինը՝ 1.9, իսկ կոնյակինը՝ 26 անգամ: Այդ ճյուղի արագ զարգացումն ուղեկցվում էր արտադրության կենտրոնացմամբ խոշոր ձեռնարկություններում: 1913թ. Հայաստանում կային 17 գինու-կոնյակի գործարաններ՝ ավելի քան 100 հազար ռուբլի տարեկան արտադրությամբ, որոնք տալիս էին գինու արտադրության 40%-ը, սպիրտի արտադրության՝ 43%-ը և կոնյակի ամբողջ արտադրությունը: Շուստովի ձեռքում էր գտնվում երկրում կոնյակի, սպիրտի և օդու արտադրության ավելի քան 50%-ը:

20-րդ դարի սկզբին մեքենայական տեխնիկան ներդրվում է թեթև և սննդի արդյունաբերության մեջ (մետաքսագործական, քամրակազմման, պանրագործական արտադրության մեջ և այլն):

Հայաստանի արդյունաբերության մեջ 19-րդ դարի վերջում կային մոտ երեք տասնյակ ֆաբրիկա-գործարանային բնույթի ձեռնարկություններ, ինչը կազմում էր ձեռնարկությունների ընդհանուր թվի միայն 1%-ը: Սակայն նրանք արտադրում էին Հայաստանի արդյունաբերական արտադրանքի մոտ 65%-ը, ինչը 1900թ. կազմում էր 2238.9 հազար ռուբլի:

Այսպիսով, Հայաստանում նույնպես մանուֆակտուրային փոխարինեց ֆաբրիկան, որը հիմնված էր մեքենաների համակարգի և շոգեշարժիչի օգտագործման վրա՝ և որը Արևմուտքի գրեթե բոլոր առաջատար երկրներում ավարտվել էր արդեն 1870 - 1880թթ.: Դրա հիմնական ցուցանիշը ամենուր ասպրանքային արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ գործարանային

արտադրանքի գերակշռումն էր: Այն չէր նշանակում ձեռքի աշխատանքի վերացում, բայց արտադրության հիմնական ձևը դառնում էր ֆաբրիկան, որը բարձրացնում էր աշխատանքի արտադրողականությունը, արագացնում տնտեսական աճի տեմպերը և, մանուֆակտուրայի համեմատությամբ, մեծացնում ապրանքային արտադրանքի թողարկումը:

Արդյունաբերական հեղաշրջումը ուղեկցվում էր բնակչության սոցիալ-տնտեսական կառուցվածքի փոփոխությամբ: 1831 - 1913թթ. Հայաստանի գյուղական բնակչությունն ավելացավ 5.9, իսկ քաղաքայինը՝ 9.1 անգամ: Քաղաքներում ձևավորվում և զարգանում էր բանվոր դասակարգը: Բանվորների թիվը 20-րդ դ. սկզբին կազմում էր մոտ 10-12 հազար մարդ: Սակայն գյուղացիների և արհեստավորների մեծ մասը աշխատանք էր փնտրում Բաքվում, Թիֆլիսում, Ռուսաստանում և արտասահմանում: 1908 - 1913թթ. նրանց թիվը տարեկան կազմում էր 8-9 հազար մարդ: Բաքվի նավթարդյունաբերության և նրա հետ կապված ճյուղերում հայերը 1904թ. կազմում էին աշխատողների գրեթե 26%-ը: Հայերը 1913թ. կազմում էին նաև Թիֆլիսի արդյունաբերական բանվորների ավելի քան 40%-ը:

Կապիտալիզմի զարգացումը Հայաստանում արագացավ 19-րդ դարի վերջում երկաթուղիների կառուցմամբ: Այն բխում էր ցարական ինքնակալության զաղոթային և ռազմաստրատեգիական ծրագրերից: 1895թ. սկսվեց Թիֆլիս-Երևան երկաթուղու կառուցումը: 1899թ. ավարտվեց Թիֆլիս-Ալեքսանդրապոլ, Ալեքսանդրապոլ-Ղարս, 1901թ.՝ Ալեքսանդրապոլ-Երևան, 1908թ.՝ Երևան-Ջուլֆա երկաթուղիների կառուցումը: Հայաստանում երկաթուղիների ընդհանուր երկարությունը 1913թ. կազմում էր 405 կմ: Անդրկովկասում երկաթուղիները 20-րդ դ. սկզբին կազմում էին մոտ 1400 կմ:

Երկաթուղիների կառուցումը վերացնում էր Անդրկովկասի տրանսպորտային անջատվածությունը Ռուսաստանից, նվաստում ռուսական և օտարերկրյա կապիտալի ներհոսքին, Անդրկովկասը ներգրավում համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ: Արևելյան Հայաստանի առևտրային շրջանառությունը 19-րդ դարի վերջում հասնում էր 14 մլն ռուբլու: Երևանում և Ալեքսանդրապոլում ստեղծվել էին մեծածախ պահեստներ, հայտնվել էին մասնագիտացված առևտրային ձեռնարկություններ, ռուսական և օտարերկրյա ֆիրմաները ստեղծել էին իրենց առևտրային կենտրոնը: Պահպանվել էին նաև առևտրի միջնադարյան ձևերը: Գյուղական առևտուրը գտնվում էր վաշխառուների ձեռքում, որոնք անխնա կողոպտում էին բնակչությունը:

Հայաստանի առևտրի կառուցվածքը արտահայտում էր նրա տնտեսության զաղոթային բնույթը: Արտադրվող գյուղատնտեսական հումքը արտահանվում էր Ռուսաստան, իսկ մեքենավածում էին պատրաստյալ արդյունաբերական ապրանքներ՝ ռուսական առևտրաարդյունաբերական բուրժուազիային ապահովելով բարձր շահույթների ստացում:

Բարձր ապրանքայնություն ունեին տեխնիկական կուլտուրաները: Արտահանվում էր, օրինակ, Հայաստանում արտադրվող բամբակի ամբողջ քանակը: 19-րդ դարի 80-ական թվականներից ռուսական ու լեհական արդյունաբերողները իրենց ձեռքը վերցրին Հայաստանում բամբակի արտադրությունը, որի 66% արտահանում էին Ռուսաստան և Լեհաստան: Արագ մեծանում էր նաև գինու, օղու, կոնյակի, մետաքսի, ծխախոտի, բրդի և այլ ապրանքների արտահանման ծավալը:

Կապիտալիստական արտադրության զարգացումը անհրաժեշտ էր դարձնում խոշոր բանկերի և վարկի զարգացումը Հայաստանում: 1872թ. Թիֆլիսում հիմնադրվեց Անդրկովկասյան առևտրային բանկը, որի երևանյան բաժանմունքը բացվեց 1893թ.: Նույն տարում բացվեց 1860թ. Ռուսաստանում հիմնված Պետական բանկի երևանյան բաժանմունքը: 1902թ. Ալեքսանդրապոլում հիմնվեց Քաղաքային բանկը:

20-րդ դ. սկզբին Ռուսաստանը թևակոխեց ինստիտուցիոնալ դարաշրջան: Բանկերի դերը կտրուկ մեծացավ: Երևանի նահանգի քաղաքներում 1913թ. գործում էին նաև ռուսական Ազով-Դոնյան, Վոլգա-Կամսկյան բաժնետիրական բանկերի բաժանմունքները: 1913թ. Հայաստանի ամբողջ վարկային միջոցների 62%-ը գտնվում էր առևտրային, իսկ 23%-ը՝ Պետական բանկի ձեռքում:

Այսպիսով, 20-րդ դ. սկզբին Հայաստանում մույնպես հաստատվել էր բանկային մոնոպոլիաների տիրապետությունը:

Չնայած դրան՝ Հայաստանը մնում էր տնտեսապես հետամնաց, ագրարային երկիր: 1913թ. արդյունաբերության տեսակարար կշիռը արդյունաբերություն և գյուղատնտեսության համախառն արտադրության ընդհանուր ծավալում ցածր էր և կազմում էր ընդամենը 36.3%:

Հայաստանի տնտեսությունն ուներ զարգության ընդհանուր և օտարերկրյա կապիտալիստները շահագործում էին հրկրի քնական ռեսուրսները: Ցարական կառավարությունն ամեն կերպ ձգտում էր Հայաստանը վերածել իր հումքային կցորդի և ռուսական ապրանքների վաճառահանման շուկայի: Ժողովրդական զանգվածները գտնվում էին ռուսական և օտարերկրյա կապիտալի կրկնակի ճնշման տակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒՅԱՆ ՑԱՆԿ

- Մ. Ադունց** «Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը 20-րդ դարի սկզբին», Երևան, 1968
- Հ. Թումանյան** «Հայաստանի տնտեսական զարգացման պատմությունը», Երևան, 1960
- Վ. Դիլոյան** «Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին եռեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները», Երևան, 1989

Պետրոսյան Լիդա Պետրոսի

**Կապիտալիստական հարաբերությունների
զարգացումը Հայաստանում
(դասախոսության տեքստ)**

**Հրատ. խմբագիր՝
Լ. Համբարջումյան**

ՀՊՏՀ գրադարան



000000648

Ստորագրված է տպագրության՝ 24.11.2000թ.:
Համձնված է արտադրության՝ 27.11.2000թ.:
Չափեր՝ 60x84/16: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրություն՝ օֆսեթ:
0.93 սլայմ. տպ. մամուլ, 0.8 հրատ. մամուլ:
Տպարանակ՝ 200:

ԵրՊՏԻ «Տնտեսագետ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128

